




**«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»**
Հ. Ներսիսյան 10/7, Երևան 0014,
+374 12345678

**«Ուիգմոր ընտանիքի առողջության կենտրոն»**
Պուշկին 56, Երևան 0002, Հայաստան
+374 12345677

**www.wigmore.am**


# ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ

## ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

WIGMORE

## Ի՞ՆՉ Է ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԸ

Շաքարային դիաբետը քրոնիկ հիվանդություն է, որը բնորոշվում է հիպերգլիկեմիայով՝ արյան գլյուկոզայի բարձրացումով: Այն առաջանում է ինսուլինի արտազատման խանգարման և/կամ ինսուլինի ազդեցության խանգարման հետևանքով:

Ինսուլինը հորմոն է, որն արտադրվում է ենթաստամոքսային գեղձի, այսպես կոչված ՝՝Լանգերհանսյան կղզյակների՞՞ բետտա-բջիջներում: Ինսուլինի ոչ լիարժեք արտազատումը և/կամ ինսուլինի անբավարար ազդեցությունը թիրախ-հյուսվածքների վրա առաջացնում է ածխաջրատային, ճարպային և սպիտակուցային փոխանակության խանգարումներ:

## ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ Ի՞ՆՉ ՏԵՍԱԿՆԵՐ ԿԱՆ

**1 ՏԻՊ 1**

Այս ժամանակ տեղի է ունենում բետտա-բջիջների աուտոիմուն ախտահարում, որի հետևանքով ինսուլինի արտադրությունը օրգանիզմում պրակտիկորեն բացակայում է: Առավել բնորոշ է երեխաներին:
Բուժումը՝ ինսուլինոթերապիա:

**2 ՏԻՊ 2**

Այս ժամանակ խանգարված է ինսուլինի ազդեցությունը և/կամ սեկրեցիան: Առավել բնորոշ է մեծահասակներին:
Բուժումը՝ շաքար իջեցնող հաբեր:

## Ո՞Ր ԱԽՏԱՆԻՇՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԴԻՄԵԼ ԲԺՇԿԻ

- Արտահայտված ընդհանուր թուլություն,
- Քաշի կտրուկ կորուստ,
- Ծարավի անհագ զգացում,
- Շատախմություն,
- Հաճախամիզություն:

Այս բոլոր գանգատների դեպքում խորհուրդ է տրվում որոշել գլյուկոզան արյան մեջ:

## ԻՆՉՊԵ՞Ս ԲՈՒԺԵԼ ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԸ

Շաքարային դիաբետ տիպ 1–ի միակ բուժումը ինսուլինաթերապիան է: Այն իրականացվում է ենթամաշկային ներարկումների ձևով:

Ինսուլինոթերապիայի ժամանակ խորհուրդ է տրվում՝

1. օրը 6-8 անգամ չափել գլյուկոզան արյան մեջ,
2. հաշվել սննդում ածխաջրատների քանակը,
3. հաշվի առնել ֆիզիկական ակտիվությունը:

## ԻՆՉՊԻՍԻ՞ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Չկոմպենսացված շաքարային դիաբետի հետևանքով առաջանում են սուր և քրոնիկ բարդություններ:

*Սուր բարդություններից է* հիպոգլիկեմիան (գլյուկոզայի նորմայից ցածր մակարդակ), ընդհուպ մինչև հիպոգլիկեմիկ կոմա:

*Քրոնիկ բարդություններից են՝*

1. Երիկամների ախտահարում (նեֆրոպաթիա),
2. Աչքերի ցանցաթաղանթի ախտահարում (ռետինոպաթիա),
3. Սիրտ-անոթային հիվանդություններ,
4. Ծայրամասային անոթների և նյարդերի ախտահարում:

Շաքարային դիաբետի բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ է՝

1. Արյան գլյուկոզայի մակարդակը պահել նորմայի սահմաններում:
2. Դինամիկ հսկողություն էնդոկրինոլոգի կողմից:

## ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...

WIGMORE